Հետաքրքիր է իմանալ

ՀԵՆՐԻ ԿԱՎԵՆԴԻՇ

Անգլիացի ազնվական ընտանիքից սերված այս հարուստ անձնավորությունն աչքի էր ընկնում մարդկային զարմանալի որակներով: Հենրի Կավենդիշը գիտությամբ զբաղվում էր հաճույքի համար, չէր սիրում հրապարակել իր աշխատությունները, ինչի հետևանքով նրա շատ հայտնագործություններ անհայտ մնացին մարդկությանը, մինչև որ նրա մահից 50 տարի անց անգլիացի ֆիզիկոս Ջեյմս Մաքսվելը հրատարակեց դրանց մի մասը:

Դա է պատճառը, որ Կավենդիշի հայտնաբերած մի շարք օրենքներ ներկայումս կոչվում են այլոց անուններով: Կավենդիշը գիտության մեջ առավել հայտնի է իր ոլորակշեռքի օգնությամբ կատարած փորձերով, որի արդյունքում նա կարողացավ ճշգրիտ չափել երկու կապարե գնդերի գրավիտացիոն փոխազդեցության ուժը, որոշել գրավիտացիոն հաստատունի արժեքը և հաշվել երկրի միջին խտությունը: